ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Տեղ, 0284-96-2-20, tegh101@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՕԳՈՍՏՈՍԻ 2024ԹՎԱԿԱՆԻ N 362-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով Սևադա Սեյրանի Գալստյանի և Մարինե Տիգրանի Նրկրարանցի օգոստոսի 05-ի դիմումը, ***որոշում եմ՝***

1.ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Քարաշեն բնակավայրի 4-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող Սևադա Սեյրանի Գալստյանի և Մարինե Տիգրանի Նրկրարանցի կողմից բնակելի տան կառուցման համար տալ շինարարության թույլտվություն:

1.1.Շինարարական աշխատանքներն իրականացնել 12 ամսվա ընթացքում:

1.2.Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Տեղ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**

2024թ. օգոստոսի 06
գ.Տեղ